



Ա. ՓԱԶԱՀՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ԲՈՒԼՂԱՐԻՈ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

1. ՆՈՐ ՓԱՍՏԱԹՈՒԴԹԵՐ ԲՈՒԼՂԱՐԻՈ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Վերշերս *Մյունիխի մեջ լուս տեսավ գերման արևելագիտ Հերթերտ Ռ. Դուգայի «Die protokollbücher des Kadiametes Sofia», München 1960, պատմական խոշոր հատորը, որուն մեջ ամփոփված են օսմանյան տիրապետության շրջանին Սոֆիա քաղաքի նահանգային դատարանի որոշմնադրերը:*

Թուրք դատարանի այս հին արխիվը պահպաժ էր Սոֆիայի քաղաքային գրադարանին մեջ և թրբագիտ պրոֆեսոր Գլըրով, որ գրադարանի տնօրենն էր, թարգմանած էր բուլղարերնի:

Թրբական փաստաթուղթերու այս թարգմանությունը առաջին անգամն է, որ լուս կտեսնե Մյունիխի մեջ և անկից գեռ մել օրինակ միայն Սոֆիա հկած է և այն ալ կդտնվի Բուլղարական գիտություններու ակադեմիայի կից պատմագիտության ինստիտուտի պրոֆ. բյուզանդագիտ իվան Դուչյանի բով։ Այս վերշինը, որ բուլղարահայության պատմությամբ մոտեն հետաքրքրվող մըն և կապ կպահե Հայաստանի պատմագիտական ինստիտուտի հետ, վերշերս մեզի ցուց տվավ այդ հրատարակությունը, որմե քաղեցինք Սոֆիայի հին հայերուն վերաբերյալ հետեւյալ հատվածները, որոնք բավական շահճեկան են բուլղարահայուց պատմության համար։

Սոֆիայի մեջ, օսմանյան տիրապետության ժամանակ, կազմավորյալ հայ համայնքի մը

խոսքը առաջին անգամ կընե ճանապարհորդ Հանս Գերնշվամսը 1553 թվականին և հայոց թիվը կհաշվի 1 000-ի ավելի, իսկ այդ թվականնեն մինչև 1640, շուրջ 90 տարի, որմէ տեղեկություն չունինք, լուր կմնայինք այդ շըրջանին համար (տե՛ս «Սոֆիայի հայերը» «էջմիածին» ամսագիր, 1960, Ե, էջ 46): 1640-ին կաթոլիկ եպիսկոպոս Պետր Բողդան Սոֆիայի մեջ կդտնե 200 տնվոր հայ իրենց գետնափոր եկեղեցիով, իսկ 1673-ին այ կաֆայեցի Մարտիրոս վարդապետը կանչնի Սոֆիային, նրուսաղեմ երթալու համար և կտեսնե Սոֆիայի հայոց եկեղեցին և Տեր Հովհաննան:

Այժմ, գերման արևելագիտի այս նոր հրատարակությամբ, ձեռքի տակ ունեցանք Սոֆիայի հայոց 1550 թվականնեն մինչև 1620 թվականի անծանոթ մնացած ժամանակաշրջանի առևտրական գործողություններ, նոր անուններ և այլն։

Փաստաթուղթ թիվ 129, գրված 1550-ին, հունիս 21-ին, Սոֆիայի թուրք դատարանին մեջ, «... Ալագուղ հայը, որ որդին է սոֆիարնակ հայ Ասուլ Փանի (արդյո՞ք Աշուղ Գանիկ, Փանոս?)», կապատի 420 աքչե (ստակ) Պետրի որդի նիկոլային»:

Փաստաթուղթ թիվ 428, սուլթանական հրավարտակի պատճեն, գրված Ասիտաների մեջ (Կոստանդնուպոլիս) և ուղարկված Սոֆիայի, Ֆիլիպեի և Զաղարայի Ատիկի (Ստ. Զակո-

¹ Փակագերու մեջ արված բոլոր բացատրությունները իմ կողմն են—Ս. Փ.։

րա) դատավորներուն 1610 թվականի փետրվար 1-ին: «Կհրամայեմ, որ հավաքեք վերկի ճիզվեն² (գլխահարկը) 1610 թվականի մարտեն մինչև 1611-ի մարտին համար այս հայերեն, որոնք Անադոլուեն եկած են և կրնակին ձեր նահանգներուն մեջ»:

Փաստաբուլք թիվ 552, սուլթանական հրովարտակի պատմեն, գրված Կոստանդնուպոլիսում մեջ և ուղարկված Սոփիայի դատավորին 1619 թվականի մարտ 8-ին. «Սոփիայի դատավորին Կհրամայեմ, որ հավաքեք գլխահարկը 1618 թվականի դեկտեմբերեն մինչև 1619 թվականի դեկտեմբերին համար այն անհավատ հայերեն և հույներեն, որոնք եկած են Անադոլուեն և ցրված են Սոփիայի նահանգին մեջ, որոնց յուրաքանչյուրը պետք է վճարե տարեկան 210 ստակ»:

Փաստաբուլք թիվ 647, գրված 1611 թվականի դեկտեմբերին, Սոփիայի դատարանի մեջ, «Սոփիայի Բանիշորա թաղամասի բնակչութերեն Հյուսեինի որդի Մեհմեդը դատարանի մեջ, Գյուղամի թաղամասի բնակից ոչ իսլամ հայ Սուրադի որդի նազարին առջև հայտարարեց, որ 1 200 ստակի ծախած է իր 5 շափալը (5 աշխատավորներու մեկ օրվան մեջ փորած տարածություն) այդին և ստացած է ամբողջ գումարը, որով այդին այսուհետև կպատկանի ոչ իսլամ հայ նաղապին»:

Փաստաբուլք թիվ 862, գրված 1620 թվականի հունվար 27-ին, Սոփիայի դատարանի մեջ. «Փիալե խալիֆեն, որ յութեավելին է (վերակացու) էմիրշահ կոչված վաքին, Սոփիայի դատարանին մեջ Խսկենդերի (Ալեքսան) որդի Սեֆերի առջև հայտարարեց, որ 2 400 ստակի ծախած է իր տունը, որ կգտնվի Փարուջի Դրական կոչված Թաղին մեջ և ամբողջ գումարը առած է, որով այդ տունը այսուհետև կպատկանի հայազգի Սեֆերին»:

Փաստաբուլք թիվ 884, գրված 1620 թվականի փետրվար 5-ին, Սոփիայի դատարանի մեջ. «Ոչ իսլամուհի Կալիցան, որ աղջիկն է (անընթեռնելի)-ին, և կապրի Կալոյան կոշված թաղին մեջ, դատարանի մեջ, ոչ իսլամ Հակոբի որդի հայ Մկըր փափասին (Տեր Մկրտիչ Հակոբյան) առջև հայտարարեց, որ Մկըր փափասին ծախած է 20 000 ստակի իր արսան (քաղաքի մեջ հողամաս), մեջը գրտեղված բոլոր կապամաններով (շենք, ծառ և այլն), որ կգտնվի Կալոյան մահալան և

² Ճիզվեն արարերեն տուրք, հարկ կնշանակեն: Արարենը այս տուրքը նախապես կհավաքեին ամեն մեկ տուն (հայերը ծովական կըսեին տուն իմաստով, օրինակ՝ քահանային ծովականը), բայց արարենը տեսան, որ մեկ տան մեջ 5—6, երեսն ալ ավելի այր մարդիկ կան, որով ճիզվեն փոխեցին մարդ գործի, գլխահարկի: Հին հոգութեացին ալ ունեին գլխահարկը:

ստացած է ամբողջ գումարը, որով այսուհետև հայոց փափասին է տերը այդ հողամասին, զոր պիտի գործածե իր կամքին և նպատակին համաձայն»:

Սահերություն հոդվածագրին:—Օսմանյան թուրքերու քով հին ատեն սովորություն կար, որ այս հպատակներուն աղոթակեղի շնուրթյան արտոնությունը կամ առուժակար գույքի շնուրթյան արտոնությունը կամ ազգին վերակացուին անունովը, որ կոչվեր միլլը վերիլի կամ մյուրեվելլի, որով հետեւնեմ, թե թիվ 884 փաստաթուղթին մեջ հիշված հողամասը, որ հայոց քահանան գնած է 20 000 ստակի խոշշոր գումարով մը, շատ հավանական է ժողովրդական հանգանակությամբ գնած է աղոթատեղի մը կառուցանելու համար Անադուլուեն նոր եկած և Սոփիայի Կալոյան և Գյուղամի փողոցներուն մեջ ապրող հայերուն համար:

Այստեղ հարց կծագի սակայն, թե 1600-ին առաջ Սոփիայի մեջ ապրող «1 000-ի ավելի» հին հայերը, զորու տեսած է Հանս Դերնշվամսը, արդյոք եկեղեցի շունե՞ին, թե չէին ուզած իրենց եկեղեցինեն ներս ընդունիլ նոր եկող հայերը իրեւ ոչ ուղղափառներ...

Ես կխորհիմ, թե նախապես եկած հայերը հունադավան կամ հայ հոռոմ եղած ըլլալով, հեռացած էին Հայաստանյայց Առաքելական եկեղեցինեն, և աղոր համար ալ վեճ կար հին և նոր հայ խմբավորութերու միջև, ինչպես կվկայի կաթոլիկ եպիսկոպոս Պետր Բոգդանը 1640-ին, թե «Սոփիայի հայերը 200 տընվոր էին, որոնք ունեին իրենց առաջին եկեղեցիները, բայց իրարմբ բաժնված էին և մեկը մյուսին կմեղադրեր իրը հերետիկոս» (տե՛ս Cnic. «Արքա զա ոսելիքնի պրուշան», գոճ. II, կհ. 2, 1930—1940 թ. շ. 182—183):

Ուրեմն այլևս պարզ է, որ Անադուլուեն 1610-ին Սոփիա մեկնող նոր հայերը, հավատարիմ մնալով Հայաստանյայց Առաքելական եկեղեցինեն, 1620-ին Տեր Մկրտչի անունով հող գնած են սկալոյան փողոցին ծայրը և շինած են իրենց գետնափոր տնակ-եկեղեցին: Եվ անտարակույս այս եկեղեցինեն խոսքն է, որ կրնեն Կաֆայեցի Մարտիրոս վարդապետը 1673-ին, որուն քահանան էր Տեր Հունաց:

Եվ ահա այդ կիսով շափ հողին մեջ պահված Ս. Աստվածածինը, իրը ստում աղօթից ամենայն հաւատացելոց և ամուլ կուռան աղգապահպանման», դարեր շարունակ հավատք և հույս ներշնչած և մխիթարած է տառապակոծ հայ գաղթական բազմությունները և չէ թողած, որ անոնք մոռնան հայրենի հավատքը և մայրենի լեզուն: Խսկ այն հին հայերը (1550-ական թվականներուն), որոնք հեռա-

յած էին կուսավորի լույսեն և մոռցած մալ-
րենի լեզուն, դարերու թանձր խավարին մեջ
խսպառ կորսվեցան և իրենց գոյութենեն առ-
կայծող հետք մանգամ շկրցան թողով:

2. ՀԱՅԵՐԵՆ ՀԱՅԳՈՒՅՑՆ ԶԵՌԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆ ՄԸ

Սոֆիայի «Կասիլ Կոլարով» պետական
մատենադարանի արևելյան բաժանմունքին
մեջ կա հայերեն ձեռագիր Ավետարան մը,
կաշեպատ տախտակյա կողքով, որուն ծա-
լան է $28,5 \times 23,5$ սմ., հաստ մագաղաթյա
267 թերթերով: Վերջին մագաղաթյա թերթին
ստորին կեսը կտրված է: Ամեն մեկ էջը ունի
2 սյունակ, 17-ական տող, իսկ տառերը՝ 5
միլիմետրանոց երկաթագիր:

Ավետարանին առաջին թերթը դատարկ է,
աչորդ 2 թերթերը՝ ցուցակագրերը սրբված,
շնչված են (թերթս մասնավոր գեղով) և վրան
գեղեցիկ բոլորագրով գրված է Ավետարանը
նորոգի տվող պատվիրատուին հիշատակա-
րանը ԶՂԵ (1346) թվականին, երբ թերթու-
պովիսը (էրզրումը) սուրով և հուրով ռանա-
պատ եղաւ ի մարդոյ և յանասնոյ, ի յաղքէն
Հաքարու և Խմայէլացւոց: Ահա այդ ծանր
օրերուն Խոսրովահը՝ նորոգել տված է այս
Ավետարանը իր և իր եղբոր՝ Շիրինշահին և
իր ծնողաց՝ Ռումեկին և Թագուհէ պր. Շահին
և սիրա տիկնայ լիշատակին խաղանեաց գա-
ւառի Բաբերդ յանառիկ դղեակին², առ ի
դրուն Սրբոյ Աստուածածնիս, եկեղեցոյ
Սրբոյ Հրեշտակապետաց. ի վերայդիտողու-
թեամբ Տեառն Միիթարայ³ և ի հայրապե-
տութեան այսմ գաւառի Տր. Սահակայ և Տր.
Ստեփաննոսի և ի թագաւորութեանն Հայոց
Կոստանդիա⁴:

¹ Մոնղոլերու տիրապետության օրով և անկե հետո
ալ Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի տեղացի
հայ ֆեոդալները հաճախ կողմած են «Եահ», «Եահ-
Արմեններ», «Եահ-Մուրադ» և ալլու Արդութ Խոսրով-
շահն ալ Բաբերդի շրջանի հայ ֆեոդալն է (տանուառ),
որուն հայրն ալ Ռումեկահ, իսկ եղբարը Շիրինշահ
կողմած են հիշատակարանին մեջ:

² Էրզրումին գեղի հուսախ գանվող Բայրութի թա-
գաքն է:

³ Միիթար Գոներցի կամ Սասունցի կողմած կաթո-
ղիկոսն է (1341—1355):

⁴ Կիլիկիո հայոց Կոստանդիան և թագաւորն է, որ իշ-
խած է 1344—1364 թվականներուն:

Այս հիշատակարանը գրված է մաքուր բո-
լորագրով, «Ճեռամբ սուսանուն սկի. Յոհանակի»,
որով կհաստատվի, թե Ավետա-
րանը նորոգված և կազմված է 1346-ին թա-
րերդ դյացի տանուառ Խոսրովահի հրա-
մանով: Բայց Հովհաննես սարկավագը Ավե-
տարանին վերցին Յ է հայերեն երկաթագրերը
սրբած, շնչած է, որպեսզի իր հիշատակարա-
նը գրե: Ուրեմն Ավետարանը ավելի հին է:
Սակայն սարկավագը իր հիշատակարանին
մեջ է հիշած, թե իրմե առաջ ո՞վ գրած է այդ
Ավետարանը, ո՞ր թվականին և որո՞ւ ծախ-
քով:

Ավետարանի 200-րդ թերթին վրա ալ կա
համառոտ և անկանոն արձանագրություն մը
ևս, որ Հովհաննես սարկավագի հիշատակա-
րանին նման Ավետարանի շնչված, սրբված
երկաթագրերուն վրա գրված է: Ուրեմն այս
վերցին, ավելի ուշ գրված է և կնմանի համ-
րակ գրչի մը ձեռագրին, մեծ մասամբ ան-
ընթեռնելի: Հազիվ կարելի եղավ կարդալ հե-
տևյալ տողերը. «Վերջաւորութիւն Յոհաննու
Ճի, սկիզբ Դուկասու Ճիթ, Մայտեսուին (?)
Ճկջ, վերջ զորդս Դուկասու Ճի...» և այլն:

Այս տողերը և տառերը գրված են ցուց
տալու համար, թե ո՞ր Ավետարանը ո՞ր էշին
կսկսի և ո՞ւր կվերցանա: Ուրիշ հիշատակու-
թյուն մը կարելի շնչավ կարդալ, տրված ըլ-
լալով, որ արձանագրության մեծ մասը ան-
ընթեռնելի է:

Հետևաբար, երկաթագիր Ավետարանը գրել
տվող պատվիրատուին, գրշագրին և ո՞ր թվա-
կանին գրված ըլլալը մեզ անծանոթ կմնան:

Այնուամենայնիվ, կասկածի տեղի տվող
շարժառիթ մըն է Ավետարանի վերցին թեր-
թի ստորին կեսին մկրատով կտրված և առ-
նըված ըլլալը: Գաղտնիք մը, որուն անտե-
ղյակ են նաև մատենադարանի պաշտոնեու-
թյունը և նույնինքն բաժանմունքի ղեկավար
դոկտ. Մ. Ստոյանովը, որ ցավով հայտնեց,
թե որևէ արձանագրություն ալ չունին, թե
ո՞ր հայր կամ ո՞վ հանձնած է այս հնագույն
Ավետարանը բուլղար պետական մատենադա-
րանին:

Սոֆիայի «Կասիլ Կոլարով» պետական
մատենադարանի սեփականություն այս հին
ձեռագիր Ավետարանը մեր հնագույն Ավե-
տարաններնեն. մեկն է և 4-րդ կամ 5-րդ տեղը
կդրավի մեր հնագույն ձեռագիր Ավետարան-
ներուն մեջ:

⁵ Սարկավագ Հովհաննես:

